



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
 ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 94-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքաշինության մասին օրենքի 14³ հոդվածի 5-րդ կետի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 29 կետի, ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 25-ի թիվ 1/Կ-106 եզրակացությունը և համաձայն սեփականատիրոջ դիմումի Նոր Հաճրն համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել քաղաքացի Արսեն Համլետի Համբարձումյանի դիմումը և Նոր Հաճրն համայնքի Քանաքեռավան գյուղի գլխավոր հատակագծին համապատասխան Արսեն Համլետի Համբարձումյանի սեփականություն հանդիսացող 07-064-0003-0008 կադաստրային ծածկագրով 0,12487 հա գյուղատնտեսական նշանակության խաղող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ:
2. Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոխված հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը վճարելուց հետո:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՍԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՐԱՄՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱԿԱԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԻՍԴԻՐՅԱՆ ԱՆԻ

ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎԱՄԱՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ՕՁՆԵՅՅԱՆ ՆԱՐԻՆԵ

Համայնքի ղեկավար՝



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ